ԳՐԱԲԱՐԻ ԱԾԱԿԱՆ//ՄԱԿԲԱՅ ԵՐԿԱՐԺԵՔ ԲԱՌԵՐԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բառերն ըստ իրենց ընդհանուր իմաստի և ձևաբանական ու շարահյուսական հատկանիշների մտնում են այս կամ այն խոսքի մասի մեջ: Սակայն բառերի խոսքիմասային կարգերը քարացած չեն: Որոշ բառեր կարող են համատեղել մեկից ավելի խոսքիմասային իմաստներ. այդ կարգի միավորները մասնագիտական գրականության մեջ կոչվում են **խոսքիմասային տարարժեք բառեր**[1]:

Խոսքիմասային տարարժեք բառերը անփոփոխ ձևով հանդես են գալիս երկու կամ ավելի ձևաբանական արժեքով շարահյուսական մակարդակում համապատասխանաբար արտահայտելով տարբեր ձևաբանական իմաստներ, քանի որ այդ բառերը տարբեր խոսքի մասերի հատուկ ձևավորում չունեն:

Գրաբարում խոսքիմասային տարարժեքություն ցուցաբերող բառերի մեջ առանձնացնում են լեզվական այն միավորները, որոնք համատեղում են ածական//մակբայ խոսքիմասային արժեքներ:

Ածականն ու մակբայը ցուցաբերում են ձևաբանաշարահյուսական որոշակի աղերսներ, որ պայմանավորված է նրանց բառական ընդհանուր իմաստով, այն է հատկանիշի ընդհանուր գաղափար արտահայտելով: Որպեսզի ածականը մակբայական իմաստով հանդես գա, այն պետք է արտահայտի այնպիսի հատկանիշի ընդհանուր գաղափար, որպիսին հատուկ լինի գործողության (կամ հատկանիշի հատկանիշի) և տարածելի լինի նրա վրա:

Ածական//մակբայ խոսքիմասային տարարժեքություն ցուցաբերող բառերի նախնական արժեքը հանգում է կամ ածականի, կամ մակբայի:

Հայ իրականության մեջ ածական//մակբայ արժեքներ համատեղող բառերը համարվել են ածականներ, որոնք, իրենց խոսքիմասային հիմնական իմաստը պահպանելով, ձեռք են բերել մի նոր գործառույթ մակբայական կիրառություն[2]:

Անշուշտ, ածականն ու մակբայն ունեն ձևաբանական և շարահյուսական կարգերի որոշակի աղերսներ, և ինչպես նշվում է մասնագիտական

---

[1] Տես Լ. Խաչատրյան , Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ, Ե., 1985, էջ 32-33: Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, Ե., 1996, էջ 39:

[2] Ժամանակակից հայոց լեզու, հ.2, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1974, էջ 136-138:

գրականության մեջ. այդ կարգի բառույթները կարող են հանդես գալ ինչպես որոշչային ու ստորոգելիական, այնպես էլ պարագայական գործառույթներով[3]:

Պայմանավորված ելակետային խոսքիմասային արժեքով այդ կարգի բառերը բաժանվում են երկու խմբի ածականական և մակբայական ծագմամբ բառեր:

ԱԾԱԿԱՆԱԿԱՆ ԾԱԳՄԱՄԲ ԵՐԿԱՐԺԵՔ ԲԱՌԵՐ

Որպես հատկանշային հասկացություն արտահայտող բառերի կարգ ածական անունը գրաբարում ձևաբանորեն բնորոշվում է նրանով, որ որոշակի դեպքերում թվով ու հոլովով համաձայնում էր գոյականին: Միավանկ ածականները և նախադաս, և ետադաս կիրառությամբ թվով և հոլովով համաձայնում են գոյականին, օրինակ մեծ տուն- մեծի տան – մեծք տունք – մեծաց տանց. տուն մեծ – տան մեծի – տունք մեծք - տանց մեծաց և այլն, իսկ բազմավանկ ածականները նախադաս գործածությամբ որպես կանոն չեն համաձայնում, օրինակ իմաստուն այր – իմաստուն առն – իմաստուն արք – իմաստուն արանց և այլն, իսկ ետադաս գործածությամբ համաձայնում են, ինչպես այր իմաստուն - առն իմաստնոյ - արք իմաստունք - արանց իմաստնոց և այլն: Բայց այս կանոնն էլ գրաբարի համար պարտադիր օրինաչափություն չէր և ուներ բազմաթիվ շեղումներ ու բացատրություններ:

Երբ խոսվում է ածականի մասին, առաջին հերթին հաշվի է առնվում նրա հիմնական, որոշչային կիրառությունը: Սակայն ածականի շարահյուսական կիրառությունները քննելիս նկատում ենք, որ ածականների մի մասը գործածվում է ոչ միայն գոյականների հետ ցույց տալով առարկայի հատկանիշ, այլև գործածվում է բայերի հետ ցույց տալով գործողության հատկանիշ, որով պայմանավորված է նրա մակբայական արժեքը:

Գրաբարյան շրջանում տարածված է եղել այն երևույթը. երբ որակական ածականները կարող էին գործածվել բայերի հետ հանդես գալով ձևի պարագայի շարահյուսական պաշտոնով, ինչպես «Ազնիւ ասացէր. այդ այդպէս է» (ՆՀԲ), «Անխտիր ի հեղուլ զարիւն արդար ի տարապարտուց գործէին» (Բուզ., 27), «Քաջ վարժեալ հելլէն դպրութեամբ ձեռնարկեցին ի թարգմանել եւ ի գրել» (Խոր., 34), «Մանր զամենայն սկսաք գրել զազգաբանութիւնսն» (Խոր., 21), «Արդ հաստատ գիտեմ զոր լուայն թէ ստոյգ է» (Բուզ., 103), «Ըստ հեռաւորութեան արեգականն սակաւ գոյ ի նա լոյսն» (Եզն., 200), «Նա արդար է, եւ մեք սուտ կռուիմք» (Փարպ., 155):

---

[3] Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974, էջ 526-527:

Ածական//մակբայ տարարժեք բառերի նախնական խոսքիմասային նշանակությունը կարելի է պարզել նրանց երկատված արժեքների նշանակությունների գործառության ոլորտում:

Երբ ածականը քննում ենք շարահյուսական մակարդակում, տեսնում ենք, որ այն համատեղում է գոյականական և բայական անդամի լրացման գործառույթներ: Գոյականական բառակապակցության մեջ ածականը դրսևորում է գոյորոշ հատկանիշ, իսկ երբ անցնում է բայական բառակապակցության ոլորտ, հեռանում է մայր արժեքի գոյորոշ հատկանիշից և կապակցություն կազմում բայերի հետ: Այս դեպքում նրա արտահայտած հատկանիշի գաղափարը տարածվում է նաև գործողության վրա: Այդ ուղիով ածականները մակբայանում են: Մակբայացած ածականները կոչվում են **գործառական կամ երկրորդային մակբայներ**[4]:

Ընդհանրապես մասնագիտական գրականության մեջ ընդունված է, որ մակբայի խոսքիմասային կարգի մեջ մտնող բառերը հիմնականում եղել են նախնական ածականներ, որոնք շարահյուսական մակարդակում մակբայացել են: Այս կարգի լեզվական միավորները կոչվել են **շարահյուսական մակբայներ**[5] կամ համարվել են **ձևաբանորեն չձևավորված ածականական մասնիկներ** տարածական նշանակությամբ, որոնք որոշակիացնում են բայական գործողությունը[6]:

Գրաբարում ածական//մակբայ իմաստներ համատեղող հետևյալ երկարժեք բառերը հատկանշվում են ածականի արժեքով.

աղոտ	բոկ	խաղաղ	մանր
ամուր	գեղեցիկ	խիստ	մեծ
անոյշ	երկար	խիտ	մեղմ
անօսր	քանձր	խոնարհ	նուրբ
ատոք	թիւր	խոշոր	շատ
արագ	ժիր	խոտոր	չքնաղ
արդար	լայն	խոր	պինդ
արթուն	լաւ	ծածուկ	տրտում
արձակ	լի	կարճ	քաջ
բարկ	խախուտ	հարթ	և այլն:

---

[4] Հմմտ. Գ.Զահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Ե., 1989, էջ 92-100:
[5] А.М.Пешковский, Русский синтакс в научном освещении, М.4 1938, с. 116.
[6] В.М.Жирмунский, История немецкого языка, Л., 1938, с. 172.

ԱՄՈՒՐ, ա. 1. Անառիկ, անմատչելի. Մտին ի քաղաքս **ամուրս** (Յեսու, ժ. 20): 2. Պինդ, դիմացկուն. Եեղքէր **զամուր** գլխանոցն (Յհ.Կթ., 30): 3. Ապահով, անվտանգ. Եգիտ այրս **ամուրս** (Բ.Մակ.Բ. 5): մ. Ամրապես, անկասկած, ապահով կերպով. Տեղի **ամուր** կեցուցանել զիս (Սաղ. Ղ. 3):

ԱՐԴԱՐ, ա. 1. Ուղղամիտ, անաչառ, անկեղծ. Կարդալ առ **արդար** դատաւորն (Ա.Մակ.ԺԲ. 5): 2. Անմեղ. Ասէին զանձն իմ իբրև զնա **արդար** եւ անարատ (Նար., 146): 3. Բարի, կենսատու. Արեգակն **արդար**, ծառագայթ օրհնեալ (Նար., 231): 4. Իրավացի. օրինավոր, ճշմարիտ. Զարդար հաւատն ուսեալ էք յԱստուծոյ (Փարպ., 51): 5. Ուղիղ, ճիշտ, անշեղ. Արդար է Տէր յամենայն ճանապարհս իւր (Սաղ. ՃԽԴ, 17): 6. Ճշմարտախոս. Ընդունելի են թագաւորի շրթունք **արդարք** (Առակ. ԺԶ. 13): մ. Արդարությամբ, ճշմարտությամբ, հավարտարմությամբ.

Զայդ **արդար** ասացէր (Յովհ. Դ. 18):

ԳԵՂԵՑԻԿ, ա. 1. Գեղանի, չքնաղ, բարետես, սիրուն. Տեսեալ զկինն, զի **գեղեցիկ** էր յոյժ (ԾՆՆ.ԺԲ. 14): 2. Վայելուչ, ընտիր, գովելի, հարմար. Մոգուցն գունդք բռնադատէին տանել զկրկս եւ ի **գեղեցիկ** տեղիս շինել ատրուշանս (Փարպ., 56): 3. Պիտանի. օգտակար. Առաջնորդս եւ իշխանս հանդերձ գեղեցիկ կարգօք հաստատեսցէ (Խոր., 109): մ. 1. Խիստ գովելի լավ. Արդ Ադամ մարդ էր **գեղեցիկ** վկայեցեր բամբասեալ զքոյին հպարտութիւնդ (Ղեւ., 67): 2. Կատարյալ, վայելչապես. Աստուած զգործուածն ամենեցուն **գեղեցիկ** գործէ (Եզն., 173): 3. Պերճախոս, չքեղորեն. Կարի քաջ գեղեցիկ եպիսկոպոս ասէ (Փիլ.):

ԵՐԿԱՐ, ա. 1. Երկարատև (ըստ ժամանակի). **Երկար** եղեւ պանդխտութիւն իմ (Սաղ. ՃԺԹ. 5): 2. Ձգված, երկարուկ (տարածությամբ). **Երկար** միջոց ճանապարհի ընդ նա եւ ընդ ամբոխն (Խոր., 35): 3. Երկարահասակ. բարձրահասակ. Այր սրտեայ էր եւ անդամովք **երկար** (Խոր., 107): մ. Շատ չափազանց երկարորեն. Ընդէ՞ր այնչափ **երկար** թողացուցին նմա խրսել (Բուզ., 149):

ԽԱՂԱՂ, ա. Հանդարտ, հնագիտ, անխռով. Անքոյթ նաւահանգիստ **խաղաղ** ի հողմոց եւ ի մրրկաց (Ոսկ. Ա. Տիմ. ԺԴ.): մ. Խաղաղությամբ, հանդարտորեն. Ջջուրն Սելովայ որ գնայ **խաղաղ** (Եսայ. Ը. 6):

ՄԵՂՄ, ա. Չափավոր, հանդարտ, թույլ, նվազ. Յետ հրոյն ձայն **մեղմոյ** օդոյ (Գ.Թագ. ԺԹ. 12): մ. Հանդարտորեն, դանդաղ, կամաց. **Մեղմ** երթայր, զի թոյլ տացէ մեռանել մանկանն, եւ ապա երթայցէ (Ոսկ. Մ. Բ. 5):

Երկարժեք բառերի վերը նշված գործածության դեպքերը, անշուշտ, բավարար են կարծիք կազմելու, որ այդ բառերի մայր արժեքը ածականական է:

ՄԱԿԲԱՅԱԿԱՆ ԾԱԳՄԱՍԻ ԵՐԿԱՐԺԵՔ ԲԱՌԵՐ

Մակբայը որպես խոսքի մաս իմաստային տեսակետից բնորոշ է նրանով, որ ցույց է տալիս գործողության հատկանիշ կամ հատկանիշի հատկանիշ:

Սակայն մակբայները, ընդլայնելով իրենց գործառական դերը, իրենց հերթին կարող են հանդես գալ նաև գոյականի լրացման դերում, ստանձնել ածականական գործառույթ հատկապես անվանական կապակցություններում: Այս դեպքում մակբայ համարվող բառը ձեռք է բերում որոշչի պաշտոն և դիտվում է ածական և ոչ թե մակբայ:

Իմաստաբանական մոտեցման դեպքում էլ երբեմն դժվար է որոշել, թե տվյալ բառը ածակա՞ն է, թե՞ մակբայ:

Ածական//մակբայ երկարժեք բառերի մակբայական ծագումը պայմանավորված է նրանով, որ մակբայը հազվադեպ կարող է առարկայի անվան վրա դրվել: Եթե մակբայը դիտելու լինենք այս տեսակետից (և այդպես էլ պետք է դիտել, քանի որ նրա բնորոշ իմաստն ու դերը գործողության հատկություն ցույց տալն է), ապա պարզ կդառնա, որ որոշչային գործառույթը մակբայի համար կիրառական հատկանիշ է, շարահյուսական դեր և ոչ թե խոսքիմասային առանձնահատկություն:

Մակբայական ծագումով երկարժեք բառերը որպես լեզվական միավոր, չնայած մտնում են ածականի խոսքիմասային կարգի մեջ, այնուամենայնիվ իրենց գործառական դերով ածական չեն, այլ ածականացած մակբայներ, որոնք կարող են մեկնաբանվել որպես բայական կապակցությունների փոխկաղապարման (փոխակերպման) արդյունք[7]:

Այդպիսի բառերը արտախոսքային պայմաններում բնութագրվում են երկգործառույթ դերով արտահայտելով թե մակբայի, թե ածականի խոսքիմասային արժեքներ:

Գրաբարում մակբայական ծագումով երկարժեք բառեր են

աղօտաբար	արքայօրէն	կամաւ	մանկաբար	ստէպ
անդ	զգաստօրէն	կորովակի	մարմնապէս	վաղ
առաւելապէս	դիւրաւ	հայրաբար	մեծապէս	վաղուց
առժամայն	եզակի	հանապազորդ	միահամուռ	վայելչաբար
առտնին	եռակի	հասարակաբար	միշտ	տիրաբար
աստ	զգօնաբար	հզօրապէս	յոգնակի	տղայաբար
արդարեւ	էապէս	հիւանդագին	ներքուստ	ցաւակցաբար
արդի	ինքնաբար	ծախողակի	նմանապէս	փութանակի
արժանաւորապէս	լռելեայն	ծրի	ուղղակի	քաջապէս
արտաքուստ	ծածկապէս	ճշմարտապէս	ուրույն	քաօրրեն
				և այլն:

ԱՐԴԱՐԵՒ, մ. ճշմարտապես, ստույգ, հաստատապես. Արդարեւ որդի Աստուածոյ ես դու (Մատ., ԺԴ. 33): ա. 1. ճշմարիտ, իսկական. Զքեզ պատուել ընկալցին որպէս զարդարեւ վարպետ իւրեանց (Խոր., 335): 2. Հարազատ.

[7] Գ.Զահուկյան, նշվ. աշխ., էջ 84:

Բարեխօսեալ առ մեծի թագաւորիդ օգնեսցես զմեզ, որպէս **արդարեւ** եղբայր սիրելի (Խոր., 334):

ԳԱԶԱՆՕՐԷՆ, մ. Գազանաբար. **Գազանօրէն** վարի (ՆՀԲ): ա. Վայրենի, դաժան. **Գազանօրէն** սրտմտութիւն (Պիտ.):

ԼՌԵԼԵԱՅՆ, մ. 1. Լռությամբ, **լուռումունջ**, անձայն. Խօսեցարուք դուք **լռելեայն** ընդ Դաւթի (Ա. Թագ. ԺԸ. 22): 2. Մենակ, մեկուսի, առանձին. Երթայր բնակէր **լռելեայն** ի Մանէ այրս (Յհ.Կթ. 40): ա. Թաքուն, գաղտնի, ծածուկ. Ձենգաւոր եւ **զլռելեայն** եւ զթագուն իրս խորամանկութեանն յայտնել կամելով (Ոսկ. Յհ. Բ. 25):

ՄԻՇՏ, մ. Շարունակ, անդադար. Անհատ աղօթիւք **միշտ** ընդ Աստուծոյ ի բարձունս խօսէր (Եղ., 191): ա. Հավիտյան, հավերժական, մշտնջենական. Մանաւանդ զի դժնեայ կցորդս այս անձնիշխանական **Միշտ** մարտիկ, խաբող շողոքորթ, յարեալ ի ստութիւն (Նար., 73):

ՎԱՅԵԼՉԱԲԱՐ, մ. 1. Վայելուչ կերպով, պատշաճորեն. Զոր սրբապէս **վայելչաբար** հրամայեաց ինքն աստուած (Փիլ. Ժ.): 2. Ըստ արժանվոյն. Ապա ուրեմն **վայելչաբար** զսուրբն Մարիամ յամենայն ազգաց զնա միայն ընտրեաց շնորհն (Ե.Գ.): 3. Խիստ գեղեցիկ կերպով, գեղեցկապես. Յուսացեալ սպասէաք **վայելչաբար** ի միասին կապակցիլ հասարակ եղբայրութեամբ (Յհ.Կթ., 258): ա. Վայելուչ, պատշաճ. **Վայելչաբար** սիրով ի միասին միախորհուրդք զմիտս կառավարեալք տիրէին ի վերայ սեպհական իշխանութեանն իւրեանց (Յհ.Կթ., 297):

ՔԱՋՕՐԷՆ, մ. Քաջի պես, քաջաբար. Ես կամէի յամենայն առաջիկայ քաղաքս խաղաղութեամբ եւ **քաջօրէն** ազատութեամբ զմուտն առնել (Խոր., 287): ա. Օրինավոր, կանոնավոր. **Քաջօրէն** եւ խաղաղական կեանս ախորժեալ ի բարեաց նմանութիւն հայելով (Փիլ.):

Ինչպես նկատում ենք, արմատական մակբայները քիչ թիվ են կազմում մակբայական ծագումով երկարժեք բառերի մեջ: Դրանք քերականորեն նշույթավորված չեն, ուստի դրանց տարարժեքությունը լուծվում է ոչ թե ձևաբանորեն, այլ շարահյուսորեն:

Այս դեպքում մեր քննած օրինակների շրջանակներում պարզորոշ երևում է, որ մակբայական ծագումով երկարժեք բառերի իմաստների մեջ իշխողը մակբայական նշանակությունն է:

Այսպիսով, գրաբարի ածական//մակբայ երկարժեք բառերի ծագունաբանական քննությունից պարզ է դառնում, որ

1. ածական//մակբայ տարարժեք բառերի նախնական խոսքիմասային նշանակությունը կարելի է պարզել նրանց երկատված արժեքների գերիշխող նշանակությունից,
2. ածականի մակբայացումը տեղի է ունենում բայական բառակապակցության շրջանակներում, երբ ածականը գոյականական բառակապակցությունից անցնում է բայականի ոլորտ, և հատկանիշի գաղափարը առարկայից բացի տարածվում է նաև գործողության վրա,
3. մակբայի ածականացումը տեղի է ունենում անվանական կապակցությունների շրջանակներում, երբ մակբայի արտահայտած իմաստը երկփեղկվում է՝ ներառելով ածականի խոսքիմասային արժեք,
4. գրաբարում ածական//մակբայ երկարժեք բառերի իմաստային և բառաքերականական նշանակությունները կենսունակ են նաև այն դեպքում, երբ հանդես են գալիս գործառական այլ միջավայրում:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բուզ. - Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913:
Եզն. - Եզնկայ Կողբացւոյ Բագրեւանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826.
Եղ. - Եղիշէի վարդապետի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երևան, 1957:
Խոր. - Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփխիս, 1913:
Ղեւ. - Պատմութիւն Ղեւոնդեայ մեծի վարդապետի Հայոց, Ս.Պետերբուրգ, 1887:
Յհ.Կթ. - Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912:
Նար. - Գրիգորի Նարեկայ Վանից վանականի Մատենագրութիւնք, Վենետիկ, 1840,
ՆՀԲ - Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, երկասիրութիւն երից վարդապետաց յաշակերտութենէ մեծին Մխիթարայ աբբահօր Հ.Գաբրիէլի Աւետիքեան, Հ.Խաչատրոյ Սիւրմէլեան, Հ.Մկրտչի Ալգերեան, հ.հ. Ա-Բ, Վենետիկ, 1836-1837:
Պիտ. - Յաղագս պիտոյից (Մ.Խորենացւոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1865.
Փարպ. - Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տփխիս, 1904:

Ճ.Գ. (Ճառընտիրք ազգի ազգի, ընդունարանք հին ճառից բնագրաց եւ թարգմանելոց ի նախնեաց, տօնականաց, եւ ներբողականաց, եւս եւ հատուածոց մեկնութեան Սուրբ Գրոց (ըստ ՆՀԲ-ի)), Ոսկ.Մ.Բ. (Յոհաննու Ոսկեբերանի Յաւետարանագիրն Մատթեոս, հ.հ. Ա-Գ, Վենետիկ, 1826), Ոսկ.Յհ.Բ. (Յովհաննու Ոսկեբերանի Մեկնութիւն աւետարանին Յովհաննու, Պոլիս, 1717), Փիլ. (Փիլոնի Եբրայեցւոյ Բանք երեք չեւ ի լոյս ընծայելք, Վենետիկ, 1822) բնագրային օրինակները քաղել ենք Լ.Խաչատրյանի «Գրաբարի բացատրական բառարանից» (Եր., 2003):